

ՊԱՇՏՈՆԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ԱՕ 84-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն աշխատանքային պայմանագրերում պարտադիր պետք է ներառվեն պաշտոնի, մասնագիտության անվանումը, նշելով որակավորմանը ներկայացվող պահանջները կամ աշխատանքային գործառույթները:

Գործատուի կողմից հաստատվող պաշտոնի հրահանգները հենց այն իրավական ակտերն են, որոնք թույլ կտան առավել բովանդակային դարձնել աշխատանքային պայմանագրի այդ կետը:

Բացի այդ, պաշտոնի հրահանգները հնարավորություն կտան առավել ճիշտ ձևակերպել պաշտոնների համար անցկացվող մրցույթների և որակավորման քննությունների պահանջները:

ՊԱՇՏՈՆԻ ՀՐԱՀԱՆԳ¹

Ֆինանսների գծով տնօրենի

Հաստատում եմ²

Տնօրեն՝ _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

□ _____ □ 20__թ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ֆինանսների գծով տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում և լուծում է տնօրենը՝ տնօրենների խորհրդի համաձայնությամբ³:

1.2. Ֆինանսների գծով տնօրենն ենթարկվում է անմիջապես տնօրենին:

1.3. Ֆինանսների գծով տնօրենն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով, ֆինանսական տնօրինության կանոնադրությամբ և սույն հրահանգով:

2. Ֆինանսների գծով տնօրենը պետք է իմանա.

2.1. Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական այն ակտերը, որոնցով կարգավորվում են ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը, այդ թվում՝ հարկային, հաշվապահական հաշվառման, մաքսային, աշխատանքային, բնապահպանական, քաղաքացիական օրենսդրությունները,

2.2. ֆինանսական հաշիվների ձևն ու վարման կարգը,

2.3. ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տնտեսական վերլուծության, ինչպես նաև ներտնտեսական ռեզերվների վերհանման մեթոդները,

2.4. ընկերության ֆինանսական (արտադրական) հզորությունները և կադրային ռեսուրսները,

2.5. շուկայի իրավիճակը,

2.6. ընկերության գործունեության ուղվածությունը, մասնագիտացումը և կառուցվածքային առանձնահատկությունները,

2.7. ընկերության ֆինանսատնտեսական զարգացման հեռանկարները,

2.8. ընկերության ֆինանսատնտեսական գործունեության պլանների մշակման և հաստատման կարգը,

2.9. ֆինանսական կառավարման շուկայական մեթոդները,

2.10. ընկերության ֆինանսական գործունեության հաշվառման և հաշվետվությունների կազմման կարգը,

2.11. ընկերության ֆինանսական գործունեության կազմակերպումը,

2.12. շրջանառու միջոցների նորմատիվների, ապրանքանյութական արժեքների ծախսերի և պաշարների նորմերի մշակման կարգը,

2.13. ֆինանսական պայմանագրերի կնքման և կատարման կարգը,

2.14 գործարար հաղորդակցության էթիկան,

2.15. աշխատանքի պահպանության, անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային պաշտպանության կանոններն ու նորմերը:

3. Պարտականությունները

Ֆինանսների գծով տնօրենը՝

3.1. ղեկավարում է ընկերության ֆինանսական տնօրինությունը,

3.2. մշակում է ընկերության ֆինանսական ռազմավարությունը,

3.3. որոշում է սեփական շրջանառու միջոցների պահանջարկը և հաշվարկում է շրջանառու միջոցների նորմատիվները, պլանավորում է դրանց շրջանառության արագացմանն ուղղված միջոցառումները,

3.4. կազմակերպում է սեփական միջոցների հայթայթմանը և փոխառու միջոցների ներգրավմանն ուղղված աշխատանքները,

3.5. որոշում և իրականացնում է ներդրումային քաղաքականությունը, մասնակցում է լրացուցիչ ներդրումային միջոցների ձեռքբերման աշխատանքներին,

3.6. փոխգործակցում է վարկային կազմակերպությունների հետ՝ վարկեր ստանալու հարցերով,

3.7. կազմակերպում է վարկեր ստանալու պայմանագրեր կնքելու աշխատանքները,

3.8. վերահսկում է ստացված վարկերի ֆինանսական ձևակերպումները,

3.9. որոշում է հիմնական ֆոնդերի կապիտալ(ընթացիկ) վերանորոգման ֆինանսավորման կարգը և պայմանները,

3.10. նախապատրաստում է փոխհաշվարկների անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերը,

3.11. մշակում և իրականացնում է վճարումների ուշացումները կանխող միջոցառումները, վերահսկում է կոնտրագենտների հետ հաշվարկների վարման ձևերի ընտրության և հաշվարկների կանոնների պահպանումը,

3.12. ապահովում է Ֆինանսական և կապիտալ ներդրումների պլաններով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը,

3.13. մասնակցում է այն կարգերի մշակմանը, որոնք ուղղված են՝

- վճարունակության ապահովմանը,

- գերնորմատիվային պահուստների առաջացման կանխարգելմանը և չօգտագործվող ապրանքանյութական արժեքների վերացմանը,

- արտադրության(ծառայության)շահութաբերության բարձրացմանը,

- շահույթի ավելացմանը,

- արտադրության և արտադրանքի (ծառայության)իրացման ծախսերի նվազեցմանը,

3.14. իրականացնում է ընկերության ֆինանսական կարգապահության բարձրացմանն ուղղված միջոցառումները,

3.15. հաշվառում է Ֆինանսական միջոցների շարժը, ինչպես նաև կազմում է ֆինանսական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները՝ ֆինանսական հաշվառման ու հաշվետվության ստանդարտներին համապատասխան,

3.16. վերահսկում է հաշվետվությունների կազմման և ձևակերպման ճշգրտությունը,

3.17. ապահովում է Ֆինանսական տեղեկատվության արժանահավատությունը, կազմակերպում է ընկերության ֆինանսական պլանների ցուցանիշների իրազեկումը,

3.18. որոշում է հնարավոր ֆինանսական ռիսկերը՝ ֆինանսական յուրաքանչյուր աղբյուրի նկատմամբ,

3.19. մշակում է Ֆինանսական ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ և ապահովագրման ծրագրեր,

3.20. որոշում է լիզինգային գործառնությունների ոլորտում ընկերության ռազմավարությունը և իրականացնում է լիզինգի ֆինանսավորումը,

3.21. մշակում է ակտիվների մի մասի վաճառքի, վարձակալության, գրավադրման, ինչպես նաև առանձին հզորությունների և օբյեկտների վերացման կամ կոնսերվացման միջոցառումները,

3.22. որոշում է գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական և նախագծային աշխատանքների ֆինանսավորման ծավալները՝ ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների հետ համաձայնեցված պայմանագրերի և նախահաշիվների համաձայն,

3.23. ապահովում է կապիտալ ներդրումների և փոխհատուցելիության հաշվարկների կազմման, ձևակերպման և նախահաշիվների հաստատման ճշտությունը,

3.24. մասնակցում է կնքվող ֆինանսական պայմանագրերի պայմանների որոշմանը, կոնտրազենտների կողմից ներկայացված պայմանագրերի փորձաքննությանը,

3.25. ապահովում է ընկերության ֆինանսական վիճակի թափանցիկությունը,

3.26. մասնակցում է նոր ձեռնարկությունների ստեղծման, վերակազմակերպման և ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների վերացման հարցերի քննարկմանը,

3.27. կառավարում է ընկերության ֆինանսական ռեսուրսների շարժի կառավարումը և կարգավորում է տնտեսվարող սուբյեկտների միջև շուկայական պայմաններում ծագող ֆինանսական հարաբերությունները՝ արտադրության և արտադրանքի(ծառայության) իրացման գործընթացներում բոլոր տեսակի ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման և առավելագույն շահույթ ստանալու նպատակով,

3.28. ղեկավարում է հեռանկարային և ընթացիկ ֆինանսական պլանների նախագծերի, կանխատեսվող հաշվեկշիռների և դրամական միջոցների բյուջեների մշակման աշխատանքները,

3.29. մասնակցում է արտադրանքի (աշխատանքի, ծառայության) իրացման, կապիտալ ներդրումների, գիտական հետազոտությունների և մշակումների, արտադրանքի ինքնարժեքի և արտադրության շահութաբերության պլանների մշակմանն, ինչպես նաև ղեկավարում է շահույթի և շահութահարկի հաշվարկման աշխատանքները,

3.30. վերլուծում և գնահատում է ֆինանսական ներդրումների արդյունավետությունը,

3.31. ապահովում է.

- եկամուտների ժամանակին ստացումն, ինչպես նաև սահմանված ժամկետներում ֆինանսահաշվարկային և բանկային գործառնությունների ձևակերպումը,

- մատակարարների և կապալառուների հաշիվների ժամանակին վճարումները,

- փոխառությունների մարումը,

- աշխատավարձի ժամանակին վճարումները,

- հարկերի և տուրքերի, սոցիալական և բանկային վճարումների ժամանակին իրականացումը,

3.32. վերահսկողություն է իրականացնում .

- ֆինանսական պլանի և բյուջեի կատարման, արտադրանքի իրացման, շահութաբերության պլանների և այլ ֆինանսական ցուցանիշների կատարման նկատմամբ,

- չսպառվող արտադրանքի (ծառայության) արտադրության դադարեցման նկատմամբ,

- դրամական միջոցների ճիշտ ծախսման նկատմամբ,

- սեփական և փոխառված շրջանառու միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ,

3.33 ապահովում է սեփական և այլ կազմակերպություններից ստացված գաղտնի համարվող տեղեկատվության պաշտպանվածությունը:

4. Իրավունքները

Ֆինանսների գծով տնօրենը իրավունք ունի.

4.1. ֆինանսական տնօրինության իրավասության շրջանակներում տալ կարգադրություններ, ցուցումներ և վերահսկել դրանց կատարումը,

4.2. ինքնուրույն լուծել իր գործունեությանը վերաբերող և վերադաս ղեկավարության կողմից պատվիրակված հարցերը,

4.3. հանդիսանալ ընկերության ներկայացուցիչը, բանակցություններ ու նամակագրություն վարել տնօրինության լիազորությունների սահմաններում և տնօրենի հետ համաձայնեցնելու անհրաժեշտություն չպահանջող հարցերում,

4.4. ընկերության այլ աշխատակիցներից պահանջել և ստանալ ընկերության գործունեության ֆինանսական վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվություններ,

4.5. տնօրինության իրավասության շրջանակներում մեթոդական օգնություն ցուցաբերել ընկերության ստորաբաժանումներին և առանձին աշխատակիցների,

4.6. անցկացնել և մասնակցել ընկերության տնտեսական գործունեությանը վերաբերվող խորհրդակցություններին,

4.7. անհրաժեշտության դեպքում, ընկերության տնօրենի համաձայնությամբ, ֆինանսական խորհրդատվության ոլորտի մասնագետներ և փորձագետներ ներգրավել խորհրդատվության, եզրակացությունների, առաջարկությունների և հանձնարարությունների պատրաստման համար,

4.8. ընկերության ղեկավարությանն առաջարկություններ ներկայացնել բարեխիղճ աշխատանքի համար աշխատողներին պարգևատրելու, ինչպես նաև աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատակիցներին կարգապահական տույժերի ենթարկելու մասին:

5. Պատասխանատվությունը

5.1. ֆինանսների գծով տնօրենը պատասխանատվություն է կրում ֆինանսական տնօրինության գործառույթները ժամանակին և պատշաճ կերպով չկատարելու համար,

5.2. Ֆինանսների գծով տնօրենը անձնական պատասխանատվություն է կրում՝

- ֆինանսական տնօրինության հրահանգների, ցուցումների, հաշվարկների և հաշվետվությունների՝ ՀՀ օրենսդրությանը չհամապատասխանելու համար,

- ընկերության ղեկավարությանը, համապատասխան ստորաբաժանումների և ձեռնարկությունների ղեկավարներին, վերահսկող մարմիններին և այլ հաստատությունների ֆինանսական հաշվետվություններն ուշացումով ներկայացնելու, ինչպես նաև ոչ արժանահավատ ֆինանսական հաշվետվություններ կազմելու, հաստատելու համար,

- ընկերության ղեկավարության հանձնարարություններն ուշացումով և անորակ կատարելու համար,

- տնօրինության աշխատակիցների կողմից ծառայողական տեղեկատվությունը ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու համար,

- տնօրինության աշխատակիցների կողմից աշխատանքային կարգապահության խախտման համար,

- տնօրինության աշխատակիցների կողմից աշխատանքի պաշտպանության կանոնները չպահպանելու

ՊԱՇՏՈՆԻ ՀՐԱՀԱՆԳ՝

Առևտրի գծով տնօրենի

Հաստատում եմ²

Տնօրեն՝ _____

(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

□ _____ □ _____ 20__ թ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Առևտրի գծով տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում և լուծում է տնօրենը՝ տնօրենների խորհրդի համաձայնությամբ³:
- 1.2. Առևտրի գծով տնօրենն ենթարկվում է անմիջապես տնօրենին:
- 1.3. Առևտրի գծով տնօրենն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով, ընկերության կանոնադրությամբ և սույն հրահանգով:

2. Առևտրի գծով տնօրենը պետք է իմանա.

- 2.1. Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական այն ակտերը, որոնցով կարգավորվում են ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը,
- 2.2. ընկերության գործունեության ուղիվածությունը, մասնագիտացումը և կառուցվածքային առանձնահատկությունները,
- 2.3. ընկերության ֆինանսատնտեսական զարգացման հեռանկարները,
- 2.4. ընկերության ֆինանսատնտեսական գործունեության պլանների մշակման և հաստատման կարգը,
- 2.5. կառավարման շուկայական մեթոդները,
- 2.6. ընկերության ֆինանսական և տնտեսական գործունեության հաշվառման և հաշվետվությունների կազմման կարգը,
- 2.7. ընկերության նյութատեխնիկական ապահովման, տրանսպորտային միջոցների սպասարկման և արտադրանքի իրացման կազմակերպումը,
- 2.8. առևտրի կազմակերպման շուկայական մեթոդները,
- 2.9. բեռնման և բեռնաթափման աշխատանքների կազմակերպումը,
- 2.10. շրջանառու միջոցների նորմատիվների, ծախսերի և ապրանքանյութական պաշարների նորմերի մշակման կարգը,

- 2.11. պայմանագրերի կնքման և կատարման կարգը,
- 2.12. աշխատանքի կազմակերպումը և կառավարումը,
- 2.13 գործարար հաղորդակցության էթիկան,
- 2.14. աշխատանքի պահպանության, անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային պաշտպանության կանոններն ու նորմերը:

3. Պարտականությունները.

Առևտրի գծով տնօրենը՝

3.1. ղեկավարում է ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը հետևյալ հարցերում.

- նյութատեխնիկական ապահովում,
- ապրանքների իրացում՝ շուկայում և մատակարարման պայմանագրերին համաձայն,
- տրանսպորտային և վարչատնտեսական սպասարկում,
- նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործման ապահովում և դրանց կորուստների նվազեցում,

3.2. կազմակերպում է իր ենթակայության տակ գտնվող ծառայությունների և կառուցվածքային ստորաբաժանումների մասնակցությունը.

- արտադրանքի իրացման ընթացիկ և հեռանկարային պլանների կազմմանը,
- ընկերության ֆինասական պլանների և առևտրային գործունեության ռազմավարության որոշմանը,

3.3 միջոցներ է ձեռնարկում.

- իրացվող ապրանքների մատակարարների և սպառողների (պատվիրատուների) հետ տնտեսական և ֆինանսական պայմանագրերը ժամանակին կնքելու համար,
- տնտեսական կապերի ընդլայնման համար,
- ապրանքների մատակարարման պայմանագրային պարտականությունների կատարումը (ըստ քանակի, անվանակարգի, տեսականու, որակի, ժամկետի և այլն) ապահովելու համար,

3.4. վերահսկում է.

- իրացումը,
- ընկերության նյութատեխնիկական ապահովումը,

3.5. ղեկավարում է.

- նյութական ռեսուրսների համալիր և խնայողաբար օգտագործմանն ուղղված միջոցների մշակումը,
- ընկերության աշխատանքի տնտեսական ցուցանիշների բարելավման և տնտեսական ինդիկատորների համակարգի ձևավորման աշխատանքները,
- ապրանքանյութական արժեքների գերնորմատիվային պաշարների, ինչպես նաև նյութական ռեսուրսների գերծախսերի առաջացմանը և վերացմանն ուղղված միջոցների մշակումը,

3.6. ընկերության անունից մասնակցում է տոնավաճառներին, աճուրդներին, ցուցահանդեսներին, բորսաներին,

3.7. վերահսկում է մատակարարման տնտեսական պայմանագրերով պայմանավորված հանձնարարությունների և պարտականությունների կատարումը,

3.8. ուսումնասիրում է ընկերության ապրանքների իրացման շուկայի իրավիճակը,

3.9. կազմակերպում պահեստային տնտեսության աշխատանքները,

3.10.ապահովում է.

- տրանսպորտային բոլոր տեսակի միջոցների արդյունավետ օգտագործումը,

- բեռնման և բեռնաթափման աշխատանքների կատարելագործումը և միջոցներ է ձեռնարկում այդ ստորաբաժանումը անհրաժեշտ մեխանիզմներով ու սարքավորումներով հագեցնելու համար,

3.11. ղեկավարում է իրեն ենթակա ծառայությունների և ստորաբաժանումների աշխատանքները:

4. Իրավունքները

Առևտրի գծով տնօրենն իրավունք ունի.

4.1. առևտրային հարցերում ներկայացնել ընկերության շահերը՝ պետական մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում,

4.2. տնօրենի քննարկմանը ներկայացնել ընկերության առևտրային գործունեության բարելավմանն ուղղված առաջարկությունները,

4.3. ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից ստանալ առևտրային հարցերին վերաբերող տեղեկատվություն,

4.4. ստուգել կառուցվածքային ստորաբաժանումների առևտրային հարցերին վերաբերող գործունեությունը,

4.5 իր իրավասության շրջանակներում տալ կարգադրություններ, ցուցումներ և վերահսկել դրանց կատարումը,

4.6. ընկերության ղեկավարությանն առաջարկություններ ներկայացնել՝ բարեխիղճ աշխատանքի համար աշխատողներին պարգևատրելու, ինչպես նաև աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատակիցներին կարգապահական տույժերի ենթարկելու մասին:

5. Պատասխանատվությունը

Առևտրի գծով տնօրենը պատասխանատվություն է կրում.

1) սույն հրահանգով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

2) իր գործունեության ընթացքում կատարված իրավախախտումների համար,

3) նյութական վնաս պատճառելու համար,

4) ընկերության ղեկավարության հանձնարարություններն ուշացումով և անորակ կատարելու համար,

5) իրեն ենթակա աշխատակիցների կողմից.

- ծառայողական տեղեկատվությունը ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու համար,

- աշխատանքային կարգապահության խախտման համար,

- աշխատանքի պաշտպանության կանոնները չպահպանելու համար:

ՊԱՇՏՈՆԻ ՀՐԱՀԱՆԳ՝

Անձնակազմի գծով տնօրենի

Հաստատում եմ²

Տնօրեն՝ _____
(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

□ _____ 20__թ

1. Ընդհանուր դրույթները

1.1. Անձնակազմի գծով տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում և լուծում է տնօրենը՝ տնօրենների խորհրդի համաձայնությամբ³:

1.2. Անձնակազմի գծով տնօրենն ենթարկվում է անմիջապես տնօրենին :

1.3. Անձնակազմի գծով տնօրենն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով, ընկերության կանոնադրությամբ և սույն հրահանգով:

2. Անձնակազմի գծով տնօրենը պետք է իմանա.

2.1. Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական այն ակտերը, որոնցով կարգավորվում են աշխատանքային և սոցիալական հարաբերությունները,

2.2. ընկերության գործունեության ուղղվածությունը, մասնագիտացումը և կառուցվածքային առանձնահատկությունները,

2.3. ընկերության տեխնիկական և ֆինանսատնտեսական զարգացման հեռանկարները,

2.4. անձնակազմի պահանջարկի պլանավորման և կանխատեսման մեթոդները,

2.5. աշխատողների կազմի քանակական և որակական վերլուծության մեթոդները,

2.6. աշխատանքի ստանդարտների համակարգը,

2.7. աշխատանքային և սոցիալական նորմատիվները,

2.8. աշխատանքային պայմանագրերի կնքման, կատարման և աշխատանքային վեճերի կարգավորման կարգը,

2.9. աշխատանքի տնտեսագիտությունը, սոցիոլոգիան և հոգեբանությունը,

2.10. աշխատավարձի վճարման ձևերն ու համակագերը,

2.11. աշխատողների խթանման ձևերն ու մեթոդները,

- 2.12. աշխատողների և նրանց աշխատանքի արդյունքների գնահատման մեթոդները,
- 2.13. կադրային փաստաթղթերի վարման ստանդարտներն ու ձևերը,
- 2.14. աշխատանքի կազմակերպումը և կառավարումը,
- 2.15 գործարար հաղորդակցության էթիկան,
- 2.16. աշխատանքի պահպանության, անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային պաշտպանության կանոններն ու նորմերը:

3. Պարտականությունները

Անձնակազմի գծով տնօրենը՝

- 3.1. մասնակցում է ընկերության սոցիալական զարգացման ռազմավարության մշակմանը,
- 3.2. ընկերության սոցիալական ռազմավարության համապատասխան ղեկավարում է ընկերության կադրային քաղաքականության ձևավորման աշխատանքները,
- 3.3 մշակում է անձնակազմի ղեկավարման արդյունավետ համակարգ,
- 3.4 վերահսկում է ընկերության կադրային քաղաքականության իրականացումը,
- 3.5 մասնակցում է ընկերության կազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի մշակմանը,
- 3.6 կազմակերպում է աշխատողների աշխատանքային շահագրգռվածությունը բարձրացնելու համալիր միջոցառումների մշակման աշխատանքները,
- 3.7 կազմակերպում է ընկերությունում սոցիալական գործընթացների ղեկավարման և աշխատանքային կոլեկտիվում սոցիալ-հոգեբանական բարենպաստ մթնոլորտի ստեղծման աշխատանքները,
- 3.8 վերահսկում է աշխատանքային օրենսդրության նորմերի պահպանումը,
- 3.9 ղեկավարում և համակարգում է ընկերության անձնակազմի ղեկավարման հարցերով ստորաբաժանումների աշխատանքները,
- 3.10 կադրային հարցերով համագործակցում է այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ,
- 3.11 պլանավորում և կազմակերպում է աշխատողների ուսուցումը,
- 3.12 պլանավորում և կազմակերպում է աշխատողների ատեստավորումը,
- 3.13 ապահովում է աշխատողների պարբերական վերապատրաստումը,
- 3.14 անցկացնում է հարցազրույցներ աշխատանքի ընդունվողների հետ,
- 3.15 ղեկավարում է կադրային ռեզերվների պատրաստման և ձևավորման աշխատանքները,
- 3.16 վերահսկում է կադրային գործավարության ճիշտ վարումը,
- 3.17 կազմակերպում է ընկերության կադրային հարցերով որոշումների իրազեկման աշխատանքները,

4.Իրավունքները

Անձնակազմի գծով տնօրենն իրավունք ունի.

- 4.1. իր իրավասության շրջանակներում տալ կարգադրություններ, ցուցումներ և վերահսկել դրանց կատարումը,
- 4.2. ինքնուրույն լուծել իր անմիջական գործունեությանը վերաբերող և վերադաս ղեկավարության կողմից պատվիրակված խնդիրները,
- 4.3. հանդիսանալ ընկերության ներկայացուցիչը, բանակցություններ ու նամակագրություն վարել անձնակազմի ղեկավարման, ղեկավար կադրերի ռեզերվի ստեղծման, աշխատանքի տեղավորման և համանման այլ գործակալությունների հետ

համագործակցության և տնօրենի հետ համաձայնեցնելու անհրաժեշտություն չպահանջող համանման այլ հարցերում,

4.4. տնօրենի քննարկմանը ներկայացնել ընկերության կադրային քաղաքականության բարելավմանն ուղղված առաջարկությունները,

4.5. ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից ստանալ կադրային հարցերին վերաբերող տեղեկատվություն,

4.6. ստուգել կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի և սոցիալական հարցերին վերաբերող գործունեությունը,

4.7. ընկերության ղեկավարությանն առաջարկություններ ներկայացնել՝ բարեխիղճ աշխատանքի համար աշխատողներին պարգևատրելու, ինչպես նաև աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատակիցներին կարգապահական տույժերի ենթարկելու մասին:

5. Պատասխանատվությունը

Անձնակազմի գծով տնօրենը պատասխանատվություն է կրում.

1) սույն հրահանգով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

2) իր գործունեության ընթացքում կատարված իրավախախտումների համար,

3) նյութական վնաս պատճառելու համար,

4) ընկերության ղեկավարության հանձնարարությունները ուշացումով և անորակ կատարելու համար,

5) իրեն ենթակա աշխատակիցների կողմից.

- տեղեկատվությունը ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու համար,

- աշխատանքային կարգապահության խախտման համար,

- աշխատանքի պաշտպանության կանոնները չպահպանելու համար:

ՊԱՇՏՈՆԻ ՀՐԱՀԱՆԳ¹

Հաշվապահի

Հաստատում եմ²

Տնօրեն՝ _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

□ _____ 20__թ

1. Ընդհանուր դրույթները

- 1.1. Հաշվապահի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում և լուծում է տնօրենը՝ գլխավոր հաշվապահի ներկայացմամբ:
- 1.2. Հաշվապահը ենթարկվում է անմիջապես գլխավոր հաշվապահին:
- 1.3. Հաշվապահին իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով, ընկերության կանոնադրությամբ և սույն հրահանգով:

2. Հաշվապահը պետք է իմանա.

- 2.1. Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական այն ակտերը, որոնցով կարգավորվում են հաշվապահական հաշվառումը,
- 2.2. հաշվապահական հաշվառման մեթոդներն ու ձևերը,
- 2.3. հաշվապահական հաշվառման փաստաթղթաշրջանառության կազմակերպումը,
- 2.4. հիմնական միջոցների, ապրանքանյութական արժեքների և ֆինանսական միջոցների շարժերի հետ կապված գործառնությունների հաշվապահական ձևակերպման և հաշվապահական հաշիվներում արտացոլման կարգը,
- 2.5. ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տնտեսական վերլուծության մեթոդները,
- 2.6. հաշվիչ տեխնիկայի շահագործման կարգը,
- 2.7. աշխատանքի, արտադրության կազմակերպումը և կառավարումը,
- 2.8. տնտեսվարման շուկայական մեթոդները,
- 2.9. աշխատանքային օրենսդրությունը,
- 2.10. աշխատանքի պաշտպանության կանոններն ու նորմերը:

3. Պարտականությունները

Հաշվապահը՝

3.1. կատարում է հաշվապահական հաշվառման աշխատանքներ՝ կապված տնտեսական գործառնությունների հետ՝ ամբողջությամբ կամ մասնակի ուղղություններով (հիմնական միջոցների, ապրանքանյութական արժեքների, դրամական միջոցների, դեբիտորների և կրեդիտորների, պարտավորությունների, ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների հաշվարկների, ապրանքների արտադրության և իրացման հետ կապված ծախսերի, ինչպես նաև մատուցվող ծառայությունների և այլ հաշվառումներ),

3.2. մասնակցում է ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման, դրանց կանոնակարգման հետ կապված միջոցառումների նախապատրաստմանն ու իրականացմանը,

3.3. իրականացնում է հաշվապահական հաշվառման կոնկրետ ուղղությանը(ուղղություններին) համապատասխան սկզբնական փաստաթղթերի ընդունումն ու հսկողությունը, ինչպես նաև դրանց հերթական հաշվառումը,

3.4. հաշվապահական հաշիվներում արտացոլում է հիմնական միջոցների, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների շարժի հետ կապված բոլոր գործարքները,

3.5. կազմում է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ինքնարժեքի հաշվարկման հաշվետվություն, բացահայտում ոչ արտադրական ծախսերի և կորուստների ձևավորման աղբյուրները, առաջարկություն պատրաստում դրանց կանխման համար,

3.6. իրականացնում է պետական և համայնքային բյուջեներ հարկերի և տուրքերի, պետական արտաբյուջետային սոցիալական ֆոնդեր ապահովագրական վճարների, բանկային կազմակերպություններ վճարումների, կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար միջոցների, աշխատողներին և ծառայողներին աշխատավարձի վճարման, այլ վճարումների հաշվարկման և փոխանցման հետ կապված աշխատանքներ, ինչպես նաև կազմակերպության աշխատողների նյութական խրախուսման համար անհրաժեշտ միջոցների առանձնացման հետ կապված աշխատանքներ,

3.7. ապահովում է ղեկավարների, պարտատերերի, ներդրողների, աուդիտորների (վերստուգողների) և հաշվապահական հաշվետվություններից օգտվող՝ այլ անձանց համադրելի և արժանահավատ հաշվապահական տեղեկատվությամբ հաշվառման համապատասխան ուղղությունների վերաբերյալ,

3.8. մշակում է հաշվարկների համար աշխատանքային նախագծեր, տնտեսական գործառնությունների ձևակերպման համար անհրաժեշտ սկզբնական փաստաթղթերի ձևեր(որոնց համար նախատեսված չեն տիպային նմուշներ), ինչպես նաև ներքին հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևեր, մասնակցում հաշվապահական տեղեկատվության մշակման, հաշվառման և տեխնոլոգիաների կիրառման հիմնական հնարքների և մեթոդների բովանդակության սահմանմանը,

3.9. հաշվապահական հաշվառման և հաշվետվության տվյալների հիման վրա մասնակցում է կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության տնտեսական վերլուծության անցկացմանը՝ ներտնտեսական պաշարների բացահայտման, փաստաթղթաշրջանառության կատարելագործման հետ կապված միջոցառումների և տնտեսման ռեժիմի իրականացման նպատակով, մասնակցում հաշվապահական հաշվառման առաջադիմական ձևերի և մեթոդների մշակմանն ու ներդրմանը՝ համակարգչային տեխնիկայի օգտագործման հիման վրա, մասնակցում դրամական միջոցների և ապրանքանյութական արժեքների գույքագրմանը,

3.10. պատրաստում է տվյալներ՝ հաշվապահական հաշվառման համապատասխան ուղղության վերաբերյալ հաշվետվություն կազմելու համար, հետևում հաշվապահական փաստաթղթերի պահպանմանը, դրանք ձևակերպում է սահմանված կարգին համապատասխան փաստադարան(արխիվ) հանձնելու համար ,

3.11. իրականացնում է հաշվապահական տեղեկատվության տվյալների բազայի ձևավորման, անցկացման և պահպանման հետ կապված աշխատանքները, փոփոխություններ է մտցնում

տեղեկատվական և նորմատիվային տեղեկություններում, որոնք օգտագործվում են տվյալների մշակման ժամանակ,

3.12. հաշվողական տեխնիկայի օգնությամբ մասնակցում է խնդիրների կամ դրանց առանձին փուլերի տնտեսական հարցադրման ձևավորմանը, որոշում պատրաստի նախագծերի, ավգորիթմների, ծրագրերի փաթեթների օգտագործման հնարավորությունը, որոնք հնարավորություն են տալիս ստեղծել տնտեսական տեղեկատվության վերամշակման տնտեսապես հիմնավորված տեղեկատվական համակարգ:

4. Իրավունքները

Հաշվապահը իրավունք ունի.

4.1. ծանոթանալ կազմակերպության ղեկավարության իր գործունեությանն առնչվող որոշումների նախագծերի հետ,

4.2. ղեկավարության քննարկմանը ներկայացնել սույն հրահանգով նախատեսված պարտականությունների հետ կապված աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ,

4.3. կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարներից, մասնագետներից ստանալ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է իր պարտականությունների կատարման համար,

4.4. կազմակերպության ղեկավարությունից պահանջել աջակցություն՝ իր վրա դրված պաշտոնական պարտականությունների իրականացման հարցերով:

5. Պատասխանատվությունը

Հաշվապահը ՀՀ օրենսդրությանը համապատասխան պատասխանատվություն է կրում.

1) սույն հրահանգով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

2) իր գործունեության ընթացքում կատարված իրավախախտումների համար,

3) նյութական վնաս պատճառելու համար,

4) ընկերության ղեկավարության հանձնարարությունները ուշացումով և անորակ կատարելու համար:

ՊԱՇՏՈՆԻ ՀՐԱՀԱՆԳ¹

ԲՈՒՀ-ի դասախոսի

Հաստատում եմ²

Ռեկտոր՝ _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

□ _____ □ _____ 20__թ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Դասախոսի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում և լուծում է ռեկտորը՝ _____ ներկայացմամբ⁵:

1.2. Դասախոսը ենթարկվում է անմիջապես ամբիոնի վարիչին և դեկանին՝ յուրաքանչյուրի իրավասությունների շրջանակներում:

2. Դասախոսը պետք է իմանա.

2.1. ՀՀ Սահմանադրությունը,

2.2. կրթության ոլորտին վերաբերող ՀՀ նորմատիվ իրավական ակտերը,

2.3. ԲՈՒՀ-ի կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները և ներքին այլ իրավական ակտերը,

2.4. կրթական պետական չափորոշիչները,

2.5. դասավանդվող առարկայի բովանդակությունը և ուսուցման կազմակերպման սկզբունքները,

2.6. մասնագիտական աշխատանքում կիրառվող հիմնական տեխնոլոգիական գործընթացները և հնարքները,

2.7. մասնագիտական ուսուցման մեթոդները, հոգեբանությունը, ֆիզիոլոգիան և մանկավարժությունը,

2.8. ուսանողների կրթության և դաստիարակության ժամանակակից ձևերն ու մեթոդները,

2.9. աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային պաշտպանության կանոններն ու նորմերը:

3. Պարտականությունները

Դասախոսը՝

- 3.1. Ուսուցումը իրականացնում է կրթական պետական չափորոշիչներին համապատասխան,
- 3.2. ապահովում է կրթական գործընթացի բարձր արդյունավետությունը, զարգացնում է ուսանողների ինքնուրույնությունը, ստեղծագործական և նախաձեռնողական կարողությունները,
- 3.3. կիրառում է դասավանդման առավել արդյունավետ մեթոդները, միջոցներն ու ձևերը, ուսանողների կողմից անհրաժեշտ տեսական և կիրառական գիտելիքների ավելի լավ յուրացմանը, ինչպես նաև վերլուծական աշխատանքի հմտությունների ձևավորմանը նպաստող մանկավարժական արդի տեխնոլոգիաները,
- 3.4. նպաստում է ուսանողների մասանագիտական ունակությունների ձևավորմանը, նախապատրաստում է նրանց՝ ձեռք բերած գիտելիքները գործնական կիրառմանը:
- 3.5. մասնակցում է կրթական ծրագրերի մշակմանը, կիրառում դրանք՝ ուսումնական պլանին և ժամանակացույցին համապատասխան,
- 3.6. վարում է դասախոսություններ,
- 3.7. անցկացնում է գործնական պարապմունքներ, սեմինարներ, ամփոփիչ հարցազրույցներ, ստուգազրույցներ (կոլլոկվիումներ), գործնական խաղեր, թեստավորումներ,
- 3.8. ընդունում և ստուգում է կուրսային աշխատանքները, ռեֆերատները, ստուգողական գրավոր աշխատանքները, դիպլոմային ավարտական աշխատանքները,
- 3.9. ընդունում է ստուգարքներ և քննություններ,
- 3.10. պլանավորում և ղեկավարում է ուսանողների ինքնուրույն աշխատանքները,
- 3.11. ուսանողների հետ իրականացնում է դաստիարակչական աշխատանքներ,
- 3.12. ուսանողների հետ անցկացնում է կոնսուլտացիաներ (խորհրդատվություն),
- 3.13. մասնակցում է ուսանողի արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների ծրագրերի մշակմանը,
- 3.14. կազմակերպում է կրթության գիտական բարձր մակարդակ ապահովող գիտահետազոտական աշխատանքերը և ներգրավում ուսանողներին այդ աշխատանքներում,
- 3.15. մասնակցում է դեկանատի և ամբիոնի նիստերին և ուսումնամեթոդական գործունեության այլ միջոցառումներին,
- 3.16. մասնակցում է ուսումնական ծրագրերի, ինչպես նաև մեթոդական և ուսումնական այլ նյութերի նախապատրաստմանը,
- 3.17. ապահովում է ուսումնական կարգապահությունը, հսկում է դասերին ուսանողների հաճախելիությունը,
- 3.18. պահպանում է ԲՈՒՀ-ի կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները, աշխատանքի անհատական պլանով և աշխատանքային պայմանագրերով ստանձնած պարտականությունները,
- 3.19 հոգաձույթամբ է վերաբերվում ԲՈՒՀ-ի հոգևոր և նյութական արժեքներին,
- 3.20. բարձրացնում է սեփական գիտակրթական մակարդակը,
- 3.21. կատարելագործում է մասնագիտական որակավորումը, մանկավարժական վարպետությունը և գործնական փորձը,
- 3.22. հարգում է ուսանողների իրավունքներն ու ազատությունները, նրանց արժանապատվությունը,
- 3.23. պահպանում է համընդհանուր ընդունված բարոյական նորմերը,
- 3.24. անհապաղ տեղեկացնում է ամբիոնի վարիչին, դեկանին՝ հարգելի պատճառներով աշխատանքային պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհնարիության մասին,
- 3.25. պահպանում է անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության կանոնները,

3.26. կատարում է ռեկտորի, ամբիոնի և դեկանատի հանձնարարությունները:

4. Իրավունքները

Դասախոսն իրավունք ունի.

4.1. ընտրել և ընտրվել ԲՈՒՀ-ի համապատասխան պաշտոններում և մարմիններում,

4.2. մասնակցել ԲՈՒՀ-ին վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը,

4.3. օգտվել գրադարանների տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ծառայություններից,

4.4. ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ ու միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձ որակը,

4.5. ունենալ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ մասնագիտական գործունեության համար,

4.6. կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից և այլ մասնագետներից պահանջել իր պաշտոնական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր,

4.7. օրենքով սահմանված կարգով բողոքարկել ղեկավարության հրամանները և կարգադրությունները:

5. Պատասխանատվությունը

Դասախոսը ՀՀ օրենսդրությանը համապատասխան պատասխանատվություն է կրում.

1) սույն հրահանգով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

2) իր գործունեության ընթացքում կատարված իրավախախտումների համար,

3) նյութական վնաս պատճառելու համար,

4) ԲՈՒՀ-ի ղեկավարության հանձնարարությունները ուշացումով և անորակ կատարելու համար:

ՊԱՇՏՈՆԻ ՀՐԱՀԱՆԳ՝

Մոնտաժի ռեժիսորի

Հաստատում եմ²

Տնօրեն՝ _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

□ _____ □ _____ 20__թ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Մոնտաժի ռեժիսորի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում և լուծում է՝ տնօրենը _____ ներկայացմամբ⁵:

1.2. Մոնտաժի ռեժիսորը ենթարկվում է անմիջապես տնօրենին:

2. Մոնտաժի ռեժիսորը պետք է իմանա.

2.1. հեռուստառադիոընկերությունների և զանգվածային լրատվական միջոցների մասին օրենսդրությունը,

2.2. հեռուստառադիոհաղորդումների բովանդակության պահանջները կարգավորող նորմատիվ ակտերը,

2.3. հեռուստառադիոընկերությունների ստեղծման ստեղծագործական գործընթացի և տեխնիկական միջոցների կազմակերպումը,

2.4. հեռուստառադիոընկերությունների մոնտաժի կազմակերպումը և տեխնոլոգիան,

2.5. մոնտաժման հրահանգները և նորմատիվ փաստաթղթերը,

2.6. մոնտաժի տեխնիկական միջոցները և մոնտաժի սարքավորումների տեսակները,

2.7. համակարգչային աշխատանքի սկզբունքները,

2.8. աշխատանքային օրենսդրության հիմունքները,

2.9. աշխատանքի պաշտպանության կանոններն ու նորմերը:

3. Պարտականությունները

Մոնտաժի ռեժիսորը՝

3.1. իրականացնում է բոլոր տեսակի և ժանրերի հեռուստառադիոձրագրերի մոնտաժի ստեղծագործական գործընթացը,

3.2. ապահովում է մոնտաժի բարձր որակը, ինչպես նաև մոնտաժման աշխատանքների նախատեսված ժամկետում իրականացումը,

3.3. իրականացնում է հեռուստառադիոձրագրերի մոնտաժը՝ ռեժիսորական սցենարի և ռեժիսորի օպերատիվ հրահանգներին համապատասխան,

3.4. սահմանում է մոնտաժողների արտադրական հանձնարարությունները և վերահսկում է դրանց կատարումը,

3.5. Ճշտում է մոնտաժի ծրագիրը, դիտում է նկարահանված (ձայնագրված) նյութը, ընտրում է դուբլերը,

3.6. նյութը պատրաստում է դիտման (լսման) համար,

3.7. ծրագիրը ձայնագրելու համար ընտրում է համապատասխան երաժշտություն,

3.8. իրականացնում է բոլոր ձայների (երաժշտություն, ռեպլիկ, ադմուկ և այլն) մոնտաժը,

3.9. ձևավորում է ծրագրերը, որոշում և հաստատում է ծրագրերի գլխագրերը, ընտրում է լուսագրերը,

3.10. ռեժիսորի և ձայնային ռեժիսորի հետ միասին դիտում են մոնտաժված ծրագրի վերջնական տարբերակը,

3.11. անհրաժեշտության դեպքում պատրաստի ծրագիրը պատրաստում է վերաձայնագրման,

3.12. ապահովում է տեսաձայնագրությունների (ֆոնոգրամաների) համակարգումը և պահպանումը,

3.13. թղթակիցների կողմից տրամադրված նյութերի հիման վրա՝ պատրաստում է ոչ բարդ հեռուստառադիոձրագրեր, ինչպես նաև արխիվային նյութերի վրա հիմնված մեկնաբանություններ,

3.14. աշխատում է հեռուստատեսային, մոնտաժային և համակարգչային բարդ տեխնիկայով,

3.15. ղեկավարում է մոնտաժողների բաժնի աշխատանքը:

4. Իրավունքները

Մոնտաժի ռեժիսորը իրավունք ունի.

4.1. ծանոթանալ կազմակերպության ղեկավարության իր գործունեությանն առնչվող որոշումների նախագծերի հետ,

4.2. ղեկավարության քննարկմանը ներկայացնել սույն հրահանգով նախատեսված պարտականությունների հետ կապված աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ,

4.3. կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարներից, մասնագետներից ստանալ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է իր պարտականությունների կատարման համար,

4.4. իր իրավասության սահմաններում, իր նախաձեռնությամբ կամ կազմակերպության ղեկավարի թույլտվությամբ, կազմակերպության կառուցվածքային տարբեր ստորաբաժանումներից մասնագետներ ներգրավել իրեն հանձնարարված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով,

4.5. կազմակերպության ղեկավարությունից պահանջել աջակցություն՝ իր վրա դրված պաշտոնեական պարտականությունների իրականացման հարցերով:

5. Պատասխանատվությունը

Մոնտաժի ռեժիսորը ՀՀ օրենսդրությանը համապատասխան պատասխանատվություն է կրում.

1) սույն հրահանգով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

2) իր գործունեության ընթացքում կատարված իրավախախտումների համար,

3) նյութական վնաս պատճառելու համար,

4) ընկերության ղեկավարության հանձնարարությունները ուշացումով և անորակ կատարելու համար:

ՊԱՇՏՈՆԻ ՀՐԱՀԱՆԳ¹

Բեմադրող - հեռուստաօպերատոր

Հաստատում եմ²

Տնօրեն՝ _____
(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

□ _____ □ _____ 20__թ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Բեմադրող-հեռուստաօպերատորի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում և լուծում է՝ տնօրենը _____ ներկայացմամբ⁵:

1.2. Բեմադրող-հեռուստաօպերատորը ենթարկվում է անմիջապես տնօրենին:

2. Հեռուստաօպերատոր-բեմադրողը պետք է իմանա.

2.1. հեռուստատեսային ծրագրերի բովանդակության նկատմամբ պահանջները կարգավորող նորմատիվ ակտերը,

2.3. հեռուստածրագրերի ստեղծման տեխնիկական միջոցները և տեխնոլոգիան,

2.4. էքսպոնոմետրիան,

2.5. կադրի կառուցման մեթոդները,

2.6. լուսատեխնիկան,

2.7. գունաբանություն,

2.8. աշխատանքային օրենսդրության հիմունքները,

2.9. աշխատանքի պաշտպանության կանոններն ու նորմերը:

3. Պարտականությունները

Բեմադրող-հեռուստաօպերատորը՝

3.1. ռեժիսորի մտահղացումներին համապատասխան իրականացնում է հեռուստատեսային ծրագրերի բեմադրման ստեղծագործական արտադրական գործընթացը,

3.2. ապահովում է տարբեր ժանրերի հեռուստատեսային ծրագրերի և տեսաֆիլմերի գեղարվեստական և պատկերային լուծումների բարձր մակարդակը, ինչպես նաև պատկերի տեխնիկական որակը,

3.3. մասնակցում է ռեժիսորական սցենարների (էքսպլիկացիա) և ծրագրերի ստեղծման օրացուցային-բեմադրական պլանների նախագծերի մշակմանը,

3.4. ռեժիսորի և բեմադրող նկարիչի հետ միասին հաստատում է դեկորացիաների էսքիզները, ինչպես նաև դեկորացիաների նախագծային, ճարտարապետական և կոնստրուկտորական մշակումները,

3.5. նկարահանում է դերասանների և ծրագրերի մասնակիցների հեռուստատեսային, ինչպես նաև լույսի, գործող անձանց դիմահարդարման, հագուստի հատուկ փորձարկումները, մասնակցում է ներկայացումների, համերգների, եթերի վարման նախնական դիտումներին,

3.6. ուսումնասիրում և ընտրում է արտատաղավարային նկարահանումների օբյեկտները,

3.7. ղեկավարում է հեռուստատեսային նկարահանումներ իրականացնող օպերատորների խումբը, կազմակերպում է նրանց աշխատանքը,

3.8. որոշում է տեսախցիկների տեղաբաշխումը և այլ տեխնիկական միջոցների օգտագործման անհրաժեշտությունը,

3.9. մշակում է լուսային և գունային պարտիտուրան,

3.10. ղեկավարում է հատուկ լուսավորությունների տեղակայումը, վերահսկում է լուսավորողների աշխատանքը, էֆեկտների որակը, լուսային և գունային պատկերները,

3.11. մասնակցում է դուբլերի ընտրությանը, մոնտաժին և պատրաստի ծրագրերի հանձնմանը,

3.12. վերահսկում է նկարահանված նյութի որակը,

3.13. անհրաժեշտ օպերատորական տեխնիկայի հայտեր է կազմում նկարահանումների, այդ թվում և ուղիղ եթերով հեռարձակվող հաղորդումների համար,

3.14. միջոցներ է ձեռնարկում նկարահանման տեխնոլոգիայի կատարելագործման և օպերատորական թերությունների կանխարգելման համար:

4. Իրավունքները

Բեմադրող-հեռուստաօպերատորն իրավունք ունի.

4.1. ծանոթանալ կազմակերպության ղեկավարության իր գործունեությանն առնչվող որոշումների նախագծերի հետ,

4.2. ղեկավարության քննարկմանը ներկայացնել սույն հրահանգով նախատեսված պարտականությունների հետ կապված աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ,

4.3. կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարներից, մասնագետներից ստանալ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է իր պարտականությունների կատարման համար,

4.4. իր իրավասության սահմաններում, իր նախաձեռնությամբ կամ կազմակերպության ղեկավարի թույլտվությամբ, կազմակերպության կառուցվածքային տարբեր ստորաբաժանումներից մասնագետներ ներգրավել իրեն հանձնարարված խնդիրների արդյունավետ լուծման նպատակով,

4.5. կազմակերպության ղեկավարությունից պահանջել աջակցություն՝ իր վրա դրված պաշտոնեական պարտականությունների իրականացման հարցերով:

5. Պատասխանատվությունը

Բեմադրողը - հեռուստաօպերատորը ՀՀ օրենսդրությանը համապատասխան պատասխանատվություն է կրում.

1) սույն հրահանգով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

2) իր գործունեության ընթացքում կատարված իրավախախտումների համար,

3) նյութական վնաս պատճառելու համար,

